№ 111 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՅԻՍԻ 22 1908 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՅԻՍԻ 22 № 111

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
(36-րդ ՏԱՐԻ)
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ
Հասցէն՝
ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՄԱՅԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 7 ՌՈՒԲԼԻ

Ամսական մէկ ռուբլի

Ամերիկա տարեկան	6 դոլլար
Եւրոպա »	30 ֆրանկ
Պարսկաստան »	10 ռուբլի

Այսօր մայիսի 22-ին
ՄՈՒՇՏԱՅԻԴԻ ԱՅԳՈՒՄ
կը կայանայ
ՄԵԾ ԶԲՕՍԱՆՔ
Գիւղերում արհեստներ տարածող Թիֆլիսի Տնայնագործական Ընկերութեան օգտին
Վիճակախաղ-ալլեգրի, պտի-շըվօ, պետրուշկա, էշերի վրա հեծնել, կարուսէլ։
ԵՐԿՈՒ ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲ
ՍԻՆԵՄԱՏՕԳՐԱՖ տիկին Իվանիցկու
Վիճակախաղի իրերի մէջ կան բաւականաչափ արժէքաւոր իրեր, նաև 100 ռուբ. պետական ռենտա։
Զբօսանքի սկիզբն է ժամը 4-ին
Մուտքը մեծերի համար 30 կ., երեխաների և աշակերտների համար 15 կ.։
(ու.կ.և.չ.հ.) տռ. 4—4

Նախազգուշացում
Դ. Զ. ՍԱՐԱՋԵՎ Д. З. Сараджевъ
ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԻՑ
ЗАВОДСКАЯ МАРКА
Նորերս ի վաճառ է հանվել օղի (столовое вино)
„ԸՆԿ. Գ. Մ. ՍԱՐԱՋԵՎ" „Т-во Г. М. Сараджевъ"
ֆիրմայով և մերին կատարելապէս նման էտիկետներով, նպատակ ունենալով մոլորեցնել պ. պ. սպառողներին, մեր ֆիրմայի հռչակով օգտվելու նպատակով։
Թողնելով դատարանին ապրանքի տարածման այդպիսի մի ձևի գնահատութիւնը, գրասենեակը խնդրում է յարգելի հասարակութեան ուշադրութիւնը դարձնել ֆիրմայի էտիկետների վրա անուան և հօրանուան սկզբնական „Դ. Զ." „Д. З." տառերին, նոյնպէս գործարանի դրօշմի՝ «այծեամը ժայռի վրա»։
(օ. մ.) տռ. 25—22

«ՑՈՒՇԱՐԱՐԻ» յայտարարութիւնը 4-րդ երեսում

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Հինգշաբթի, մայիսի 22-ին
Գ. պ. անդամների, կանդիդատների, նրանց ընտանիքների համար կը կայանայ
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ
Սկիզբն է երեկոյեան ժամը 9-ին։
տռ. 1—1

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. ԹԱԴԷՈՍԵԱՆ
Մայիսի 20-ից կը վերսկսի հիւանդների ընդունելութիւնը կովկասեան հանքային ջրերում։
Հասցէն՝ Էսսենտուկի, Верхняя Курсовая ул., дача Введенской.
(և. հ. կ.) տռ. 10—7

ԼԵՕԻ ՅՈԲԵԼԵԱՆԸ

Այսօր Թիֆլիսում տօնվում է Լէօի գրական գործունէութեան քսանհինգամեայ յոբելեանը։

Լէօի գրիչը գործել է գրականութեան զանազան ասպարէզներում։ Նա տուել է գրական ստեղծագործութիւնների փորձեր թէ վիպագրութեան, թէ քննադատութեան և թէ պատմական ուսումնասիրութիւնների մէջ։

Նրա գրական գործունէութեան նախնական քայլերը արտայայտվեցին վիպագրութեամբ և լրագրական թղթակցութիւններով։ Այնուհետև սկսեցին գերակշռող դեր կատարել քննական գրուածքները, որոնք ժամանակ առ ժամանակ ընդմիջվում էին վիպական և նկարագրական գրուածքներով։

Իսկ աւելի ուշ Լէօի գրիչը գրավեց պատմական և կենսագրական աշխատութիւններով։

Եւ վերջին տարիներում Լէօի գլխաւոր գործունէութիւնը ծանրացած էր պատմագրական երկասիրութիւնների վրա։

Երիտասարդ Լէօի վրա նրա գրական գործունէութեան սկզբնական շրջանում նկատելի էին բնութեան և շրջապատող կեանքի թելադրանքները նրա աշխատութիւնների մէջ, բայց կամաց-կամաց նրան կլանում են գիրքը, օրագիրը, գրադարանը, ձեռագիրը և յիշատակարանները։ Նա խորասուզվում է մօտիկ և հեռաւոր անցեալի ուսումնասիրութիւնների մէջ, որոնելով իր աշխատութիւնների համար նիւթեր և ցուցումներ՝ ձեռագիր թէ տպագրված գրուածքների և յիշատակարանների մէջ։

Նրա գրասիրութիւնը նպաստեց նրան ծանօթանալու բազմաթիւ հեղինակութիւնների հետ և տեղեկութիւններ ամբարելու հայ պատմութեան և գրականութեան ուսումնասիրութեան համար։

Թէ քննական իր գրուածքներում և թէ պատմագրական ու կենսագրական իր աշխատութիւնների մէջ Լէօն կանգնած է բարեշրջման հողի վրա, կենտրոնացնելով իր ուշադրութիւնը այն շրջանների վրա, որոնք կրում են իրանց վրա վերածնութեան դրոշմը և ստեղծում են հոսանքներ հայի մտաւոր և հասարակական կեանքում։

Այժմեանից կարելի է ասել, որ ապագայ քննադատութիւնը անշուշտ ստիպված կը լինի մտցնել այս ու այն էական ուղղումներ Լէօի կատարած ուսումնասիրութիւնների մէջ, բայց Լէօին կը պատկանի Նախաձեռնութիւնը պատմական և կենսագրական մի շարք երկասիրութիւնների, որոնց մէջ փորձ է արված հաշիւ տալու թէ ինչ է տուել հայ գրականութիւնը և ինչ են ներկայացնում առանձին խոշոր գործողները։

Լէօի գրական գործունէութեան մեծագոյն մասը անցել է «Մշակի» մէջ և գտնվել է այն մտաւոր հոսանքի ազդեցութեան տակ, որ կազմվել է «Մշակի» հիմնադրի Նախաձեռնութեամբ և զարգացել է նրա յաջորդ գործողների միահամուռ գործակցութեամբ։

Լէօն դեռ չէ վերջացրել իր գրական գործունէութեան ծրագիրը և շարունակում է նիւթեր ժողովել իր ապագայ աշխատութիւնների համար, որոնք վերաբերում են հայ պատմագրութեան և գրականութեան։

Այսօր, երբ տօնվում է Լէօի գործունէութեան քսանհինգամեակը, «Մշակի» խմբագրութիւնը յայտնում է յոբելեարին իր շնորհաւորութիւնը, ցանկանալով որ նա ոյժ և հնարաւորութիւն ունենայ իր գրական ծրագիրները իրագործելու, աւելացնելով նոր հատորներ այն գրադարանին, որ նա տուել է մեր հասարակութեան։

Լէօն կարող է համարձակ ասել, որ նա զուր չէ անցկացրել իր գրական գործունէութեան քսանհինգ տարիները և եղել է ժամանակակից հայ գրականութեան բեղմնաւոր աշխատաւորներից մէկը։

«Մշակի» խմբագրութիւն

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ

IV *)

Մեր նախորդ յօդուածներում մենք ցոյց տուինք, որ մինչև 1871 թիւը հայոց եկեղեցին ունեցել է Ռուսաստանում (նոյնը և Պարսկաստանում, Թիւրքիայում) իրաւունք բանալ եկեղեցիներին կից եկեղեցական-ծխական անունով, բայց ամեն տեսակ (ստորին, միջնակարգ) ժողովրդական-հանրակրթական դպրոցներ, որոնց ներքին կառավարութեան վերաբերմամբ նա վայելել է ինքնավարական իրաւունք։

Սակայն, երբ 1871 թւին ռուսաց կառավարութիւնը հրատարակեց մի ընդհանուր կանոնադրութիւն եկեղեցական-ծխական դպրոցների համար, կովկասեան ուսումն. վարչութիւնը, հիմնվելով այդ նոր կանոնադրութեան վրա, կամեցաւ հայոց եկեղեցական-ծխական դպրոցներն ևս ենթարկել այդ կանոնադրութեան, կամ, ուրիշ խօսքով, զրկել նրան ինքնավարութեան իրաւունքից։ Սակայն հայոց եկեղեցու այդ ժամանակվայ պետ Գէորգ Դ. կաթողիկոսը, հիմնվելով պօլօժենիայի և եկեղեցու վայելած դարևոր իրաւունքների վրա, ընդդիմացաւ և միջնորդեց՝ չը զրկել եկեղեցին այդ իրաւունքից։ Բայց կառավարութիւնը, կամենալով որոշ ռեգլամենտացիայի ենթարկել հայոց եկեղեցու այդ ինքնավար իրաւունքը դպրոցական գործի մէջ և որոշել նրա յարաբերութիւններն առ կառավարութիւնը, հրատարակեց 1874-ին 4 յօդուածներից բաղկացած մի կանոնադրութիւն, որ կոչվում է «1874 թ. յունվարի 19-ի կանոններ» և որի բովանդակութիւնն է.

1) Համաձայն օրէնքների ժողովածուի XI հատորի, I մասի, 975 դ յօդուածին, հայ լուսաւորչական հոգևորականութեան պարտաւորութիւնն է մնում հիմնել եկեղեցական դպրոցներ և նրանց վարել, նոյնպէս և հոգացողութիւն՝ ժողնելու դասատուութեան կանոնաւոր և յարմար եղանակ և պահպանելու բարի վարք ուսուցանողների և աշակերտների մէջ։

2) Ժողովրդական դպրոցների տեսուչների (инспекторъ) վրա, հայ հոգևորականութեան հիմնելիք և վարելիք ընդհանուր կրթական եկեղեցական-ծխական դպրոցների վերաբերմամբ, պարտաւորութիւն է դրվում, համաձայն 1873 թւի նոյեմբերի 22-ին Բարձրագոյն հաստատված Պետական Խորհրդի կարծիքի, հսկողութիւն ունենալ

ա) որ բոլոր դպրոցներում աւանդվի ռուսաց լեզուն, իսկ այն դպրոցներում, որտեղ աւանդվում են ընդհանուր պատմութիւն և աշխարհագրութիւն, աւանդվին նաև ռուսաց պատմութիւն և աշխարհագրութիւն՝ ռուսերէն լեզուով.

բ) Որ այս դպրոցներում ուսուցանողները լինեն ռուսահպատակներ և ունենան պարտ ու պատշաճ բարոյական յատկութիւններ։ Իսկ միջամտել տնտեսական մասի մէջ կամ նրան կոնտրոլի ենթարկել՝ տեսուչներին իրաւունք չէ տրվում։

3) Այն ուսումնարանները, որոնք նպատակ ունեն հոգևորականներ պատրաստել, չեն ենթարկվում ժողովրդական ուսումնարանների տեսուչների հսկողութեան և գտնվում են հոգևոր իշխանութեան բացառական վարչութեան տակ։ Այս դպրոցների ուսման դասընթացքի և ներքին կարգերի մասին կանոնները պէտք է ներկայացվեն Բարձրագոյն կառավարութեան ի հաստատութիւն։ (յօդ. 1004)

Այնուհետև, ինչպէս մենք գիտենք, 1874-ից մինչև 1884 թիւը, հայոց եկեղեցական-ծխական դպրոցները կառավարվեցին համաձայն 1874 թ. Բարձրագոյն հաստատված այդ կանոնների, և այդ դպրոցների թւում կային նաև շատ հանրակրթական բնաւորութիւն և միջնակարգ ծաւալ ունեցող ուսումնարաններ, ինչպէս Թիֆլիսի Գայիանեան ուսումնարանը, Ալէքսանդրապօլի Արղութեան, Շուշու Մարիամեան, Ախալցխայի Կարապետեան ուսումնարանները։

Երբ փոխարքայութիւնը վերածվեց 1881 թ. կառավարչապետութեան, կառավարչապետ իշխան Դոնդուկօվ-Կորսակօվի նախաձեռնութեամբ և օրով, այն ժամանակ, երբ կաթողիկոսական գահը թափուր էր, հրատարակվեցին 1884-ին նոր կանոններ, որոնցով ջնջվում էին հայոց եկեղեցու դարևոր ինքնավարական իրաւունքները դպրոցական գործում և սահմանափակվում ու կրճատվում էին դպրոցների թէ ծաւալը, թէ բովանդակութիւնը։ Հայոց եկեղեցին այդ ժամանակ ի դէմս տեղապահի և սինոդի մերժեց ընդունել այդ նոր կանոնները, ուստի և հայոց բոլոր եկեղեցական-ծխական դպրոցները փակվեցին կառավարութեան կարգադրութեամբ, մինչև որ եկաւ նոր կաթողիկոս, Մակար Ա., որի միջնորդութեամբ կառավարութիւնը մի քանի մանր փոփոխութիւններ մտցրեց 1884 թւի կանոնների մէջ այն էլ միայն Մակար կաթողիկոսի համար անձնապէս, և հայոց եկեղեցական-ծխական դպրոցները վերաբացվեցին ու շարունակեցին իրանց գոյութիւնը մինչև 1896 թիւը, երբ նրանք նորից փակվեցին։ Դրանից յետոյ 1903-ին գրավեցին եկեղեցական գոյքերը, որպիսի գրաւումն առաջ բերեց հայ ժողովրդի մէջ յայտնի յուզմունքներ, բողոքներ, ժողովրդական ընդդիմադրութիւն, մինչև որ 1905 թ. օգոստոսի 1-ին հրատարակվեց այն Բարձրագոյն ուկազը, որով վերականգնվեցին 1874 թւի կանոնները կամ եկեղեցու վայելած ինքնավարական իրաւունքները դպրոցական գործի մէջ։

Այդ ուկազի հրատարակման օրից սկսվում է մի նոր դարաշրջան հայոց եկեղեցական դպրոցների համար։

Հ. Ա.

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Բէլոստոկ, 19 մայիսի

Հրաման է արձակված Բէլօստոկում հաւաքված կօզակներին՝ խօպեօրներին, ուլանցիներին ու պլաստուններին յետ կանչելու մասին։

Լուր է պտտում, որ շուտով յետ կը կանչվի նաև Դրմանի զօրամասը։

Սահմանագլխի վրա մնալու են միայն Գրուզինսկի, Սամուրեան և Թիֆլիսեան գնդերի հինգ վաշտերը որսորդական խմբերի փոխարէն, սահմանապահներին օգնելու համար։ («Кс.»)

—

Երէկ «Կրեստի» բանտում, երբ զբօսում էին վըբօրգցիները, բանտի սենեակներից սկսեցին լսվել. «Կեցցէ առաջին Դուման»։ Այնուհետև սկսեցին թխկթխկացնել և երգել յեղափոխական ներքողներ։

Զբօսանքը իսկոյն դադարեցնում են։ Պետրունկեվիչին վերադարձնում են իր բանտային խուցը, իսկ միւսների զբօսանքի ժամանակամիջոցը կրճատում են։

Թխկթխկոցն ու երգերը դադարեցին մի վաշտ զինւորներ գալուց յետոյ միայն։

—

Պետերբուրգ, 20 մայիսի

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը ուսումնարանական շրջանների հոգաբարձուներին ուղարկել է ստորև բերված ցուցմունքները.

Վերացվում է այն արտօնաւոր ընդունելութիւնը, որ գոյութիւն ունէր մինչև օրս վեցդասեան ուսումնաւարտ սեմինարիստների համար համալսարան մտնելու ժամանակ։ Նրանց վրա տարածվում են համալսարանների ուսանողների ընդունելութեան պայմանները, որոնք որոշված են չորս հանրակրթական դասարանների ընթացաւարտների համար, այսինքն մաթեմատիկայի, ֆիզիկայի և նոր լեզուներից մէկնումէկի լրացուցիչ քննութիւնները։

Այն անձինք, որոնք բարձր կրթական հաստատութեան դասընթացքի աւարտման վկայական ունեն, կարող են համալսարանի ուսանող ընդունվել բացառապէս միջնակարգ կրթութեան իրանց վկայականների հիման վրա և պատշաճ դէպքերում համապատասխան լրացուցիչ քննութիւնները տալուց յետոյ։

Ոչ մի կերպ չի թոյլատրվում պայմանաւորեալ կերպով համալսարանի կամ ուրիշ բարձրագոյն կրթական հաստատութեան ուսանող ընդունել այն անձանց, որոնք բաւարարութիւն չեն տալիս սահմանված պահանջներին։ Համալսարանների և միւս կրթական հաստատութիւնների խորհուրդներին է մնում որոշել բոլոր ֆակուլտէտների, բաժանմունքների և դասընթացքների ուսանողների նորմալ թիւը, հաշւի առնելով դահլիճների մեծութիւնը և այն հանգամանքը, որ ինչպէս հնարաւոր է հանդիսանում անարգել կերպով պարապմունքները առաջ տանել բոլոր կրթական օժանդակիչ հաստատութիւններում։

Կողմնակի ունկնդիրները կարող են ընդունվել միայն սահմանված թւի սահմաններում, եթէ ուսանողներին ընդունելուց յետոյ ազատ տեղեր կը մնան։ Չեն կարող կողմնակի ունկնդիր թւում ընդունվել նրանք, որոնք հէնց նոր են վերջացրել միջնակարգ դպրոցը, որոնք իրաւունք չունեն ուսանող համարվել։

Կանայք ոչ մի դէպքում չեն ընդունվում կողմնակի ունկնդիրների թւում։ Առանց բարեյուսութեան վկայականների՝ կողմնակի ունկնդիրները չեն ընդունվում։

Հրէաների վերաբերութեամբ գործադրվում է նոյն տոկոսային նորման, որը և ուսանողների համար է։ Կողմնակի ունկնդիրներն ամեն տարի ձեռք են բերում կրթական հաստատութեան մէջ մնալու իրանց իրաւունքը։ («Հ. Գ.»)

—

Պետերբուրգ, 19 մայիսի

Կառավարիչ սենատի տուած վերջին բացատրութեան համաձայն՝ խաղաղ անցնող ստաչկաները անպատժելի են։ Այդ պատճառով արհեստակցական միութիւնների կողմից գործադուլարներին նպաստներ բաժանելը միագամայն թոյլատրելի է։

—

Հրատարակված են գեներալ Դումբաձէի բացատրութիւնները, որտեղ իր գործունէութեան մասին արված հարցապնդումը անտակտութիւն է համարվում. ձախակողմեան պատգամաւորներին նա անուանում է «լէվկաներ» և խոստանում է «այսուհետև անպի-

---

*) Տես «Մշակ» № 109

տանների հետ այլևս քաղցր չը վարվել, ինչպէս որ մինչև այժմ էր»։

Պետերբուրգ, 20 մայիսի

Բարձրագոյն հաստատված մասնաժողովը Բաղդադ քաղաքը յայտարարում է ժանտախտից անբարեյաջող։ («Հ. Գ.»)

Լօնդօն, 20 մայիսի

Ժանտախտը օրէ-յօր շարունակվում է. մայիսի 19-ին վախճանվեց առաջին եւրոպացին։

Այսօր տեղեկութիւն ստացվեց, որ եղել են հիւանդութեան 27 դէպքեր։ Հիւանդացածներից շատերը մեռնում են։ («Հ. Գ.»)

Կ. Պոլիս, 20 մայիսի

Թիւրքական լրագիրները հրատարակել են Սամոսի իշխանի հեռագիրը։ Նրա մէջ ասված է. «Պալատը մինչև նաւատորմի գալը պաշարված էր ապստամբներից, որոնք շարունակաբար յարձակումներ էին գործում։ Յարձակումները յետ են մղված։ Պալատում գտնվող զօրքերը կորուստ չունեցան։ Ապստամբները կրակում էին թիւրքաց զօրքերի վրա սրանց ափ իջնելու ժամանակ։ Նաւային թնդանօթաձիգ վաշտը ցրեց ապստամբներին. զօրքերը գրաւեցին Վաթին և շրջակայ բլուրները, որից յետոյ ապստամբները դադարեցին կրակելուց։

Ապստամբների պարագլուխ Սոֆուլիսը շրջեց կղզին և առաջարկեց ազգաբնակութեանը միանալ նահանգապետի դէմ, որը իբր թէ ցանկանում է խախտել երկրի արտօնութիւնները։

Ապստամբների թւում գտնվում էին բոլոր 153 ժանդարմները, հաշւելով օֆիցէրներին, նաև ոստիկանական և մի քանի պաշտօնեաներ։ Սոֆուլիսի և նրա համախոհ Հաջիդակիի ագիտացիան սկսվեց երկու տարի սրանից առաջ։ Սամոսի իշխանի հանգստացուցիչ թռուցիկը ի դերև հանեց Սոֆուլիսի ջանքերը։ Իշխանը զանազան տեղերից հպատակութեան և շնորհակալութեան հաւաստիացումներ ստացաւ»։

Բէուֆ-փաշայի հեռագիրը նոյնպէս հաղորդում է, որ կարգ ու կանոնը վերահաստատված է և սուլթանը մեծ յօգութիւն ունի։ («Հ. Գ.»)

Կ. Պոլիս, 20 մայիսի

Սամոսը հովանաւորող մեծ պետութիւնները առաջադրութիւններ արին Բ. Դրան։ Ֆրանսիական և անգլիական դեսպանատների առաջին թարգմանները բերանացի պահանջ են յայտնել, որ Սամոսի ստատուսը չը խախտվի և թիւրքական զօրքերը հեռանան կարգ ու կանոնը վերահաստատվելուց յետոյ։ Ռուսաց դեսպանատունը մայիսի 19-ին նոյնպիսի քայլ արեց։

Արտաքին գործերի մինիստրը խոստացաւ կատարել առաջին պահանջը, սակայն յայտնեց, որ զօրքերը հաւանօրէն կըմնան մի որոշ ժամանակ։ Ազգային ժողովը կը բացվի մի քանի օրից յետոյ։ («Հ. Գ.»)

Կ. Պոլիս, 20 մայիսի

Բ. Դուռը առաջադրեց դեսպաններին միջազգային զօրքը Կրետէ կղզուց [illegible]

Լօնդօնի թիւրքաց դեսպանը հաղորդում է Բ. Դրան, որ Անգլիան առաջարկութիւն է արել թողնել Կրետէում 20 զինւոր թիւրքաց դրօշակը պաշտպանելու համար։ («Հ. Գ.»)

Լուգանսկ, 20 մայիսի

Այրվում է Մօսկվա-Կիէվ-Վօրօնէժ երկաթուղագծի հանքը։ Աշխատանքները կանգ են առել։ Մարդկային զոհեր չը կան։ («Հ. Գ.»)

ԼԷՕ

(Առաքել Բաբախանեան)

Հարկաւոր ենք համարում մի քանի կենսագրական տեղեկութիւններ հաղորդել Լէօի մասին, որի յոբելեանը տօնվում է այսօր։

Առաքել Բաբախանեանը (Լէօ) ծնվել է Շուշում 1860 թ. ապրիլի 14-ին մի խեղճ ընտանիքի մէջ։ Հայրը՝ արհեստով դերձակ, միևնոյն ժամանակ ժամկոչութիւն էր անում Շուշու եկեղեցիներից մէկում։ Սկզբնական կրթութիւնը նա ստացաւ տեղական «խալիֆա» կոչված վարժապետներից մէկի մօտ. ապա մտաւ Շուշու թեմական դպրոցը, ուր այդ ժամանակ հայկաբանութեան ուսուցիչ էր գրաբարագէտ Մաղաքիա Պլուզեանը, որի մօտ հայերէնը սովորել է և Մուրացանը։ Աւարտելով այդտեղ ուսումը՝ 1874-ին նա մտնում է Շուշու քաղաքային դպրոցը, որի ուսուցչական կազմը համեմատաբար աւելի հմուտ և պատրաստված անձերից էր բաղկացած։ Այդտեղ վերջացնելով ուսումը 1878-ին, նա, ծնողների աղքատութեան պատճառով, չէ կարողանում գնալ Թիֆլիս կամ մի այլ տեղ գիմնազիա մտնելու և աւելի բարձր ուսում ստանալու և ստիպվում է իր ընտանիքի պահպանութեան համար որևէ պարապմունք գտնել. ստանձնում է գրագրի պաշտօն տեղական նօտարի մօտ մինչև 1881 թիւը, ապա մտնում է պետական ծառայութեան մէջ տելեգրաֆիստի պաշտօնով, որի մէջ մնում է մինչև 1893 թիւը։ Իր ստացած ուսումը նոյնիսկ գիմնազիական չը լինելով, նա ստիպված էր ինքնակրթութեամբ, ընթերցանութեամբ լրացնել իր կրթութեան պակասը։ Միևնոյն ժամանակ նա սկսում է թղթակցութիւններ ուղարկել հայ լրագիրներին, գլխաւորապէս «Մշակին», որի խմբագիր Գրիգոր Արծրունին հմայել էր նրան իր յօդուածներով, հայեացքներով և ուղղութեամբ։ Նա դառնում է «Մշակի» ջերմ կուսակից և երկրպագու։ Իր առաջին թղթակցութիւնը «Մշակի» մէջ նա գրեց 1882-ին։ Միաժամանակ նա աշխատակցում է և «Աղբիւրին», «Տարազին», «Արմենիային»։ Առաջին ինքնուրոյն աշխատութիւնը «Ուխտաւորի յիշատակարանը» վերնագրով՝ լոյս տեսաւ Շուշում, 1884-ին։

«Մշակի» խմբագրութեան մէջ, իբրև մշտական աշխատակից, նա հրաւիրվեց միայն 1895 թ. սեպտեմբերից, Գրիգոր Արծրունու մահից 3 տարի յետոյ։ Մինչ այդ նա աշխատակցում էր իբրև գաւառական թղթակից և պարապում էր գրականութեամբ, իբրև կողմնակի զբաղմունքով։

Ինչպէս յայտնի է, Գր. Արծրունու մահից յետոյ «Մշակի» խմբագրութեան կազմը բաղկացած էր հետևեալ անձերից՝ Ալ. Քալանթարից, Խաչ. Մալումեանից, Յ. Տէր-Մարկոսեանից և Հ. Առաքելեանից։ Այդ կազմի վրա էր ծանրանում լրագրի գործունէութեան ամբողջ ծանրութիւնը, լրագրի, որ զրկւել էր հայ ժողովրդի լայն համակրութիւնը։ Այդ կազմը «Մշակի» հրատարակիչ Անդ. Արծրունու միջոցով և հրաւիրեց Լէօին, իբրև մշտական աշխատակից։ «Մշակը» հնարաւորութիւն տուեց նրան տպել իր էջերում՝ բացի բուն օրագրական յօդուածներից՝ մի քանի այնպիսի աշխատութիւններ, որոնք, իսկապէս, պէտք է առանձին գրքերով լոյս տեսնէին, ինչպէս «Մելիքի աղջիկը», «Հայկական տպագրութիւնը» և այլն։ Վերջին մի քանի տարին, որ է 1903, 1904 և 1905 թ. թ., նա յաճախ հիւանդանում էր և բժշկութեան համար զանազան տեղեր գնալով՝ չէր կարողանում գործունեայ մասնակցութիւն ունենալ լրագրի մէջ։ 1906 թիւ սկզբից նա թողեց իր աշխատակցութիւնը «Մշակում»։

Հարկաւոր ենք համարում յայտնել, որ, ինչպէս մեզ հաղորդում են, Բագուի հայուհիները, նախաձեռնութեամբ «Արամազդ» ընկերութեան, հաւաքել են պ. Լէօի օգտին մի որոշ գումար։ Մօտ 4—5000 րուբլի ևս հաւաքվել է զանազան մի քանի դրամական ընկերութիւններից, որով ընդամենը մօտ 15,000 րուբլի է հաւաքվել։ Ի նկատի ունենալով, որ մեր գրողներից շատերը, որոնց յոբելեանները տօնվել են, օրինակ Ղ. Աղայեան, Պ. Պռօշեան, հազիւ ստացել են 8—10,000 րուբլի նուէր,—պէտք է մեծ գոհութեամբ արձանագրել այդ փաստը, որ պատիւ է բերում հայ ունևոր դասակարգին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՆՍԱՐԿՈՒՆԵՐԻՆ

Ես հասայ իմ նպատակին։

Բանսարկուների գործունէութեան վարագոյրի մի ծայրը բացվեց։

Իսկ «Մշակի» անցեալ № 100-ում «Բանսարկութեան հերոսներին» կոչված իմ յօդուածում ես հրաւէր էի կարդում, որ իմ հակառակորդները հանդէս գան իրանց ամբողջ ռազմամթերքներով, ես գրեցի հետևեալ տողերը.

Համեցէք ասպարէզ։

Գոնէ կիմանանք, թէ մութ անկիւնների սալօնների թելադրողները ինչպիսի առասպելներ հնարելու են ընդունակ։

Եւ ահա առաջին իսկ բացատրութիւնը, որ տուեց «Վտակը» իր № 108-ում, իբրև պատասխան, հանդէս է բերում անբարեխղճութեան, ստորութեան և բանսարկութեան փայլուն ապացոյցներ։

Մենք կանգ կառնենք այդ կէտերի վրա։

«Վտակը» անամօթաբար շարում է հետևեալ տողերը.

Չէ՞ որ մի մեծ շրջանում, հէնց իր պ. Քալանթարի ներկայութեամբ, նրա անունը անարգանքի սիւնին բևեռեցին այնպիսի մարդիկ, որոնք ոչ մի կապ չունեն «Վտակի» հետ։

Ես կտրական կերպով յայտնում եմ, որ այդպիսի մի ժողովում ես ներկայ չեմ եղել։ Ոչ ոք ոչ մի սիւնի չէ բևեռել ինձ։ Այո, ճիշտ է, կային ստորագոյն բնազդի հետևողներ, որոնք ցանկանում էին պղտոր ջրեր կազմել և ինտրիգներ առաջ տանել, բայց այդ նրանց չաջողվեց և ճշմարտութիւնը հանդէս եկաւ իր բոլոր զօրութեամբ։

Նենգամիտ մի քանի ակնարկները առիթ տուին ինձ ասելու այդ ժողովում, թէ ես նկատում եմ ժողովականների մի մասի կողմից ստոր ինտրիգ առաջ տանելու ձգտում, բայց նախագահողը հաւատացնում էր, որ այդպիսի բան չէ կարող լինել։ Եւ ես այսօր առանց զարմանալու տեսնում եմ, որ իմ ենթադրութիւնը բոլորովին ճիշտ է եղել։

Ընդհանրապէս՝ ժողովը լսելով ոչ միայն իմ, այլ և ուրիշ անձերի բացատրութիւնները իմ բռնած դիրքի նկատմամբ, համոզվեց, որ տարածված բանսարկութիւնները բոլորովին անհիմն են։

Թէ ինչ դիրք պէտք է բռնէի ես դպրոցական յանձնաժողովում՝ այդ ես ինձ համար պարզել էի մի պատասխանատու ժողովում, որի անդամները հրաւիրված էին ոչ իմ ցուցմամբ և որի նախագահողն էր մի անձնաւորութիւն, որը ոչ ինձ մտերիմ մի անձ էր և ոչ էլ տածում էր քնքոյշ զգացմունքներ դէպի ինձ։ Յանձնաժողովից հեռանալու խնդիրը դրել էի այդ ժողովում ես ինքս։ Ժողովականները, միայն մի անձի բացառութեամբ, որոշեցին, որ ես պէտք է շարունակեմ գործել, որ ես բարոյական իրաւունք չունեմ հեռանալու և որ նոյն իսկ իմ հարց յարուցանելը այդ մասին օտարոտի է, իբրև բոլորովին աննպատակայարմար մի առաջարկ։

Իմ մնալ չը մնալու և գործելու վերաբերմամբ կայացած խորհրդակցութեան և որոշման մասին վկայեցին «Վտակի» յիշած հասարակական ժողովում նաև մի քանի անձեր, և ես անշուշտ գոհ կը լինէի, եթէ նրանք նեղութիւն յանձն առնէին նոյնը անելու հրապարակօրէն, որպէսզի բանսարկութեան մշուշը մի աւելորդ անգամ ևս փարատվէր և ցրվէր։

Այս իմ բացատրութիւնից յետոյ, որ արդէն արվել է և ժողովում, ինչ անուն տալ հետևեալ անամօթ նախադասութիւններին, որոնք շարված են «Վտակի» էջերում.

Երբ կաթողիկոսական ներկայացուցիչները հեռացել են յանձնաժողովի նիստերից, բողոքելով ուսումնարանական հոգաբարձուի կազմած «Նախագծի» դէմ, պ. Քալանթարը մնացել է այնտեղ, մասնակցել է յետագայ զբաղմունքներին։

Այո, ես պէտք է մնայի և պէտք է մասնակցէի զբաղմունքներին։—Դա նախատեսված էր ինձ համար։ Այդ կողմից ես ունէի իմ վաւերականը նախնական խորհրդակցութիւններից։

Եւ ընդհակառակը, եթէ ես հեռանայի, անշուշտ, կենթարկվէի յանդիմանութեան այն շրջաններից, որոնց խորհրդակցութիւնը կարևոր էր համարված գործի համար։ Եւ անշուշտ «Վտակի» միտումնաւոր և թշնամական յօդուածները այսօր ուրիշ գիծ ընդունած կը լինէին և շեշտակի ուղղված կը լինէին իմ այդպիսի քայլի դէմ և այն էլ երևի ինչ աղմուկով և ինչ կասկածելի աղ ու պղպեղով։

«Վտակը» ասում է.

Իսկ այն բոլորից յետոյ նա (Քալանթարը) իրեն էկսպերտ անունն է տալիս այդ հարցում և, ինչպէս վերևում յիշեցինք, գնացել արձանագրութեան տակն էլ աւելացրել է, որ ինքը «հասարակութեան ներկայացուցիչ չէ», եթէ «Նախագծի» մասին առանձին գրաւոր կարծիք է տուել—այդ բոլորը կատարվել է post factum դպրոցական գործիչների արտայայտած կարծիքի ազդեցութեամբ և ոչ ինքնաբերաբար։

Այդ բոլորը սուտ է սուտի վրա և անամօթ կեղծիք։

Ոչ ոք այդտեղ չէր կարող ազդել, և այն ամենը, ինչ որ ես արել եմ, եղել է բոլորովին տրամաբանական, «ինքնաբերաբար» և ոչ թէ գործիչների արտայայտած կարծիքից յետոյ։

Այն հասարակական ժողովները, որոնց ես ներկայ եմ եղել, տեղի են ունեցել դպրոցական յանձնաժողովի նիստերից յետոյ և այնուհետև մինչև այսօր ոչ մի նոր նիստ դեռ տեղի չէ ունեցել, և ինչ որ ես ասել եմ յանձնաժողովում, եղել է ձեր ակնարկած ժողովներից առաջ։

Լաւ լսեցէք՝—այդ ժողովներից առաջ, ուրեմն մինչև այդ ժողովները, և ուրեմն ձեր թեր և դէմ հակաճառութիւններից առաջ։

Եւ երբ ես ժողովում ասացի, թէ իմ վերաբերմամբ չէ կարող խօսք լինել, որովհետև ես թէ յանձնաժողովի նիստում և թէ Փոխարքայի մօտ եղած ժամանակ զեկուցել եմ, որ իմ կարծիքները ես յայտնել եմ ոչ իբրև հասարակութիւնից ընտրված, այլ իբրև հրաւիրված անձ և էկսպերտ, այն ժամանակ ժողովի նախագահողը ասաց՝ «ուրեմն այդ որոշումը վերաբերում է նրանց, որոնք չեն արել այդպիսի յայտարարութիւն»։

Այդ կարող են վկայել թէ ամբողջ ժողովը և թէ նրա նախագահը։ Մի՞թէ այդպիսի խոստովանութիւն անելու համար էլ քաղաքացիական արիութիւն է պահանջվում։

Իսկ այն արձանագրութիւնը, որի տակ ես նկատողութիւն եմ գրել այդ առիթով, նա դեռ կարդացված չէ յանձնաժողովի նիստում և վաւերացված չէ։ Նրա գոյութեան մասին հասարակական ժողովին միայն մասնաւոր տեղեկութիւններ է տուել մի շահագրգռված անձ։ Իմ կողմից գնալ ստորագրելը մի վաղաժամ կատարված ձեւականութիւն էր, որովհետև այդ արձանագրութիւնը դեռ չէ զեկուցված, դեռ դօկումենտ չէ, դեռ չէ ընդունված. իսկ այն բառերը, որոնք թիւրիմացութեան արդիւնք են դարձել, նոյնիսկ ես չեմ լսել, ինչպէս այդ լաւ գիտէին նիստին մասնակցած հայ անդամները։ Այն նկատողութիւնը, որ այնտեղ ես աւելացրի, արդէն աւելի վաղ յայտնված էր յանձնաժողովին և զեկուցված Փոխարքային։

«Վտակը» ասում է, որ գրաւոր կարծիքը տրված է որոշ ազդեցութեան տակ։ Դա դարձեալ սուտ է։ Որովհետև նա արդէն գրված և պատրաստ էր ձեր յիշած ժողովներից առաջ։ Եւ եթէ նոյնիսկ ուշ տրված լինէր՝ դա ոչ մի նշանակութիւն չունի, կաթողիկոսական պատգամաւորները իրանց բերանացի յայտնած բնազդերը գրաւոր կերպով ներկայացրին բաւական ուշ. բայց այդ հանգամանքը չէ փոխում իրերի էութիւնը։

«Վտակը» ասում է, որ «նոր դպրոցներ բանալու հարցը կովկասեան բարձր իշխանութեան թոյլտուութեանն է թողնվում»։

Դա էլ սուտ է։

Ճիշտ է, այդպէս էր թելադրում ուսումնարանական հոգաբարձուի նախագիծը, բայց իմ բացատրութիւններից և փաստաբանութիւններից յետոյ՝ այդ կէտը փոխվեց և ընդունվեց, որ դպրոցներ բանալու իրաւունքը պատկանում է հայոց հոգևորականութեան։

Ոչ միայն այդ, այլ և ուրիշ կէտեր փոխված են իմ պատճառաբանված բացատրութիւններից յետոյ։

Ինչ վերաբերում է ուսուցչական ցենզի և դասագրքերի, այլ և մի քանի ուրիշ կէտերին, ես տուել եմ պատճառաբանված առանձին կարծիքներ, որոնք կարող են դեռ նկատի առնվել թէ յանձնաժողովի և թէ Փոխարքայի կողմից։

Ես կը կրկնեմ դարձեալ այն, ինչ որ ասել եմ անցեալ անգամ, այն է՝ որ «դպրոցական գործի համար ես լուրջ և անձնուէր աշխատել եմ։ Եւ եթէ գիտենայի, թէ աւելի լաւ գործունէութեան ճանապարհներ և հնարաւորութիւններ կան, կանէի։ Մեր խորհրդակցութիւնները այդպիսի ճանապարհներ և հնարաւորութիւններ չէին մշակել»։

Ա. Քալանթար

Յ. Գ.— «Վտակի» մշուշներ տարածող քաղաքականութեան գոհարներից մէկն էլ հետևեալ տողերն են.

Չէ՞ որ նրա հասցէին, թէև շատ քնքոյշ ու քաղաքավարի, բայց խորհրդաւոր ձևով յանդիմանութիւն էր բղխում կաթողիկոսական ներկայացուցչի վերջին դառն զեկուցումից։

Ահա դա էլ այն նորութիւններից մէկն է, որ գոնէ ինձ յայտնի չէր։ «Խորհրդաւոր ձև», «յանդիմանութիւն», «դառն»—դրանք շատ բան կարող էին պարզել միայն «Վտակի» սահմած մշուշների, մառախուղների և պղտոր ջրերի երկրպագուների դէմքերը որոշելու համար։

Բացվում են դիմակները։

Ա. Ք.

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆԻՍՏԸ

Այս տարվայ մայիսի 6-ին, կոմսուհի Ուվարովայի նախագահութեամբ՝ նրա տանը, Մոսկվայի կայսերական հնագիտական ընկերութիւնը հերթական նիստ ունեցաւ, ուր պ. Ուսպենսկին մի քանի ջերմ խօսքեր նուիրեց Խարկովի համալսարանի հանգուցեալ պրոֆ. Ռեդինի յիշատակին, որ գեղարուեստի հմուտ դասախօսներից մէկն էր և մի ժամանակ ս. Էջմիածին էլ եղել էր, մայր աթոռի մատենադարանի դիպտիքիօնները ուսումնասիրելու նպատակով։ Զեկուցումից յետոյ նախագահուհին առաջարկեց ներկայ հասարակութեան յարգել հանգուցեալի յիշատակը յոտնկայս, որ և անմիջապէս կատարվեց։ Ապա կոմսուհին յայտնեց, թէ ստացվել է պ. Լօպատինսկուց ընկերութեանս կովկասեան ճիւղի գործունէութեան տարեկան հաշիւը, որը քարտուղար պ. Տրուսովսկին կարդաց ի լուր ամենքի։ Զեկուցված ռեֆերատների ցանկից պէտք է եզրակացնել, որ տեղական հայերը անցեալ տարի թոյլ մասնակցութիւն են ունեցել ճիւղի գործերում. և հազիւ միայն պ. Տէր-Աւետիսեանցի անունը յիշվեց բազմաթիւ ռուս և վրացի ռեֆերենտների թւում. այն ինչ կովկասեան ճիւղի հիմնարկութեան նախաձեռնութիւնը, եթէ չեմ սխալվում, մեր հայրենակիցներին է պատկանում։ Սկզբում նրանք շատ տաք կպան գործին, բայց յետոյ բուռն եռանդը իսպառ կորաւ անյայտացաւ. ուրեմն բանից դուրս է գալիս, որ Մովսէս Խորենացու խօսքերը—«կամիմ և ոչ զանիմաստաբար բարս առաջնոցն մերոց նախնեաց առանց յիշատակի բամբասանաց թողուլ»—տակաւին իրանց զօրութիւնը չեն կորցրել մինչև այժմ էլ։ Առանց ազգային հին յիշատակարանների ուսումնասիրութեան հազիւ թէ կարելի է երևակայել մի ազգի վերածնունդը։ Բայց այդպիսի տարրական ճշմարտութիւնները մեզ համար մասամբ վիճելի են մնում։

Անցեալ տարի գարնանը հնագիտական ընկերութիւնս Երևանի գիմնազիայի տեսուչ, այժմ ուսուցիչ Գանձակում, պ. Սլաօսեւին առանձին գումար տալով յանձնարարել էր մի գիտական արշաւանք կատարել Երևանի նահանգում՝ հայկական և պարսկական հնութիւնները հետազօտելու նպատակով։ Այս նիստում կոմսուհին յայտնեց, թէ պ. Սլաօսեւից ինքը ստացել է մի շարք լուսանկար պատկերներ հայոց վանքերի, հին եկեղեցիների, աւերած շէնքերի, պարսից սարդարի ապարանքի, որոնք բաժանվեցին ներկայ անդամներին զննելու համար։ Սլաօսեւի մանրամասն զեկուցումը այդ մասին դեռ պատրաստ չէ. բայց դրանից բոլոր նահանգը նա չէ կարողացել ուսումնասիրել, ուստի հարկաւոր է շարունակել արշաւանքը այս տարի էլ։ Նիստում կոմսուհին առաջարկեց դարձեալ 1000 ր. նշանակել հայկական հնութիւնների ուսումնասիրութեան համար։ Յառաջ քան նիստը փակելը, նախագահ կոմսուհին շատ ցաւեց, որ փետրվարի 21-ին իր հիւանդութեան պատճառով չը կարողացաւ անձամբ ներկայ լինել Լազարեան ճեմարանում՝ պրոֆ. Ն. Մառի դասախօսութիւններին Անիի պեղումների մասին և, դիմելով ներկայ հայ անդամներից մէկին, խնդրեց տալ մի քանի տեղեկութիւններ պ. Մառի գործունէութեան մասին, յատկապէս դասախօսութիւններից։ Տեղեկութիւնները տրվեցին, որոնց զեկուցանողը յարեց, թէ մի ժամանակ պրոֆ. Մառը իր գործը սկսել էր Անիում 300 ր. փոքրիկ գումարով, բայց այս տարի հայ հասարակութիւնը, գնահատելով վերջապէս անխոնջ գիտնական մշակին, տալիս է նրան վեց հազարից աւելի մի գումար, որ պ. Մառը միջոց ունենայ մեծ մասշտաբով շարունակելու իր պեղումները Անիում։ «Մեծ պատիւ է բերում հայ հասարակութեան նրա առատաձեռնութիւնը այս դէպքում», ուրախութեամբ նկատեց կոմսուհին և առաջարկեց պ. Մառին անդամ ընտրել հնագիտական ընկերութեան նրա գիտական բեղմնաւոր գործունէութեան համար. քուէարկութիւնը յետաձգվեց մինչև միւս նիստը։ Նախագահի ընկեր ակադեմիկ Դ. Անուչինը խնդրեց մեզանից Մառի մասին կենսագրական տեղեկութիւններ, որ մեծ պատրաստակամութեամբ հաղորդեցինք նրան։ Նիստը փակվեց և անհուն բերկրանօք լցված սրտով վերադարձայ տուն. դա առաջին անգամն էր, որ գիտական կաճառում փայլեց հայ հասարակութեան ինքնաճանաչութեան պատիւ։ Բայց իմ ուրախութիւնը երկար չը տևեց, տեղի տալով տխուր խորհրդածութիւններին, երբ յանկարծ յիշեցի, թէ որտեղ են հիւրընկալվում Մառի պեղումներից լոյս աշխարհ ելած հնութիւնները.—մի անշուք տնակի մէջ Անիում։ Ապա ո՞ւր է Էջմիածնի թանգարանը։ Դիցուք թէ հանգուցեալ Հայրիկը շատ տարօրինակ գաղափար ունէր հայկական հնութիւնների մասին, բայց նա այժմ չը կայ. իսկ նրա շինած թանգարանը գոյութիւն ունի՞, թէ չէ. ինչ է մտածում մ. աթոռի միաբանութիւնը։ Մոսկվայի հնագիտական ընկերութիւնը հակառակ չէ, որ Ռուսաց Հայաստանում ժողոված հնութիւնները պահվին Էջմիածնի թանգարանում, եթէ միայն լաւ հսկողութիւն լինի դրանց վրա։

Մ. Շովրեան

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Մայիսի 28 ին Շուշի քաղաքում նշանակված է Կալբալիբէկով գիւղի այն 20 բնակիչների գործը, որոնք մեղադրվում են 1904 թ. ընդդիմադրութիւն ցոյց տալու մէջ ոստիկանութեան և պրիստաւին, որոնք եկել էին նահանգական վարչութեան կարգադրութեամբ խլելու կալուածատիրական կալուածքը, որ յափշտակել էին յիշեալ գիւղացիները։

Մեղադրեալներին պաշտպանելու է «Тиф. Лист.»-ի խմբագիր Իվ. Գր. Խաչատրեանը, որ մեկնել է արդէն Շուշի։

ԱՅՍՕՐՎԱՅ ՉՔՈՍԱՆՔԻ ԱՌԻԹՈՎ

Իւրաքանչիւր երկիր, ինչպէս և իւրաքանչիւր ժողովուրդ, զօրեղ, բարեկեցիկ և երջանիկ կը լինի առաւելապէս այն ժամանակ, երբ ամեն անհատ որոշ մշտական աշխատանքով է պարապում։ Այն երկիրները, ուր անգործ, աշխատանք չունեցող թափառողների թիւը մեծ է, շարունակ գոյութիւն են պահպանում սպանութիւնները, կողոպուտները, աւազակութիւններ և սրանց նման շատ և շատ յանցանքներ, որոնք քրոնիկական բնաւորութիւն են ստանում յաճախադէպ։ Այդ երկիրները ամենաթշուառներն են լինում։

Եւ ընդհակառակն, այնտեղ, ուր մարդիկ նուիրված են իրանց հալալ աշխատանքին, իրանց քրտինքով համեստօրէն հաց ճարելուն, միշտ բարգաւաճութիւնը անպակաս է լինում։

Մեր խօսքը մասնաւորենք հայկական միջավայրով։

Հայի առանց այն էլ քայքայված անտեսութեանը իրանց ուժգին զարկը տուին նրա գլխին վերջին տարիներում պայթած սարսափելի արհաւիրքները։ Հայ գեղջուկը, իր աչքերով տեսնելով իր վերջին ունեցած-չունեցածի աւերվելը ոգէտ և փանաթիկ թշնամու ձեռքից, յուսահատ դրութեան մէջ ընկած, գաղթել և գաղթում է քաղաքները գոնէ օրական պարէնը հայթայթելու նպատակով թէ իր և թէ գիւղում մնացող իր ընտանիքի համար։ Սակայն այժմեան առևտրի, գործարանային և արդիւնաբերութեան ճգնաժամը, դեռ չը կարողանալով գոհացում տալ աշխատաւորներին, յուսախաբ է անում հայ գիւղացուն, աշխատանքի բոլոր աղբիւրներից զրկելով նրան։

Եւ «աւետեաց երկրի» յոյսով քաղաք վազող այդօրինակ անգործ գիւղացիների շարքերն են, որ ամենայն օր բազմում են, ինչպէս Նպաստամատոյց Յանձնաժողովի, այնպէս և բարեգործական ընկերութիւնների և մասնաւոր հաստատութիւնների ու անձերի դռները։ Նրանք էր, որ Կովկասեան հ. բարեգործական ընկերութիւնը, բացի մեծ մեծ ծրագիրները և շարունակ դրամ ժողովելը, իր ձեռքի տակ ունեցած պատկառելի գումարների մի մասով բանար «աշխատանքի տուն», որը մեր խորին համոզմունքով վերջ կը դնէր աշխատանք որոնողների մուրացկանութեանը և ցամաք հացի համար իր հարազատ զաւակին ծախելու բարբարոսութեանը…

Տակաւին նոր է Թիֆլիսի տնայնագործական ընկերութիւնը, որը իրօք իր նպատակն է դրել այդ վսեմ և համակրելի գործը—գիւղերում արհեստներ տարածելու խնդիրը: Նա նախագծել է մի շարք արհեստանոցներ բանալ հայկական գիւղերում և արհեստի գաղափարը, աշխատանքի սէրը միս ու արիւն դարձնել գիւղացիների մէջ: Իր կրթական-ջուլհականոցը ունենալով Թիֆլիսում, մօտ օրերս նա ճիւղ է հաստատելու Փամբակի մի քանի գիւղերում:

Իսկ իր նիւթական վերին աստիճան սուղ դրութիւնը ստիպում է իր օգտակար գործը կատարելու համար պակասաւոր միջոցների դիմել: Այսօրվայ Մուշտայիդի այգում տեղի ունենալիք զբօսանքի արդիւնքը նրա օգտին է: Հարկ չենք համարում շաբլօնական խօսքերով յորդոր կարդալ հայ հասարակութեան՝ նպաստել այսօրվայ զբօսանքի կատարեալ աջողութեան:

Թող աշխատանքի նախանձախնդիր ամեն ոք շտապէ գործով ապացուցանելու այդ սրբազան լօզունգը…:

Փաստոս

ՎԸԲՈՐԳՑԻՆԵՐԻ ԲԱՆՏԱՐԿՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋԸ

Նախորդ անգամ մենք հաղորդել էինք Վըբորգի կոչի առիթով դատապարտված առաջին Պետական Դումայի մի խումբ անդամների բանտ ուղարկվելու մասին Պետերբուրգում, որոնց մէջ ի հարկէ չէին յիշված Մոսկվայի պատգամաւորները: Վերջիններս ուղարկվել են Մոսկվայի նահանգական Տագանկի բանտը: Միայն ներքին գործերի մինիստրի նախկին օգնական իշխ. Ս. Դ. Ուրուսովը ոստիկանական պրիստաւի հետ միասին գնացել է բանտային ամրոցը:

Ամենից առաջ բանտ են ուղարկվել նախկին իշխ. Պ. Դ. Դոլգորուկովը և Գ. Ֆ. Շերշենեվիչը: Դա եղել է ժամը 1-ին: Իսկ մօտաւորապէս ժամը 2-ին Տագանկի բանտի առջև հաւաքվում են ժողովրդի ահագին բազմութիւն, դատապարտվածների ազգականները, հարազատները, բարեկամները, ծանօթները: Շատերի ձեռքում ծաղիկներ կային: Յետոյ արդէն իրար ետևից սկսեցին գալ միւս պատգամաւորները—Եակուշկին Հերքեվ, իշխ. Ուրուսով, Կոմիսարով, Կոկոշկին, Լեդնիցկի և Նեչայեվ: Բանտի առջև խմբված բազմութիւնը համակրական ցոյցեր արեց և ծաղիկների տարափով ծածկեց նրանց: Բանւորական ներկայացուցիչ Սավելեվին հրաժարվեցին ընդունել միւս պատգամաւորների հետ միասին. նրան, իբրև աւելի ցածր ծագումի պատկանողի, փոխադրեցին ուրիշ բանտ:

Ս. Ա. Մուրոմցեվը ուշացել էր. դեռ ևս չը կար: Նա այդ օրը սպասում էր կայարանում իր աղջկանը: Վերջապէս նա ևս երևաց: Հասարակութիւնը կեցցէներով դիմաւորեց I Պետական Դումայի նախագահին և ծաղիկներ մատուցեց նրան:

ԲԱՆՍԱՐԿՈՒԹԻՒՆ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Որովհետև բանսարկութեան հերոսները պնդում են շարունակ, թէ Սագանը հերքումն է ուղարկել մեզ և մենք դիտմամբ չենք տպել, ուստի մենք հարկաւոր ենք համարում տպել այսօր այդ նամակը անփոփոխ, առանց նոյնիսկ նրա կէտադրութիւնն ու սխալներն ուղղելու, հաստատելու համար մեր ասածը, թէ 1) այդ հերքումն նամակը տպելը անյարմար էր իրա Սագանի համար, 2) խուժանապետները ճնշում են գործ դրել նրա վրա, և նրա վերջին նամակը «Վտակի» մէջ պէտք է համարել արդիւնք այդ ճնշման, 3) այն, որ նա պահանջում է հերքել, թէ իբր ինքը գրել է, որ Աւալիանուն Թաղել են բուրfաց Թաղի ռուսաց եկեղեցում, այն ինչ Սագանն ինքն իր առաջին նամակի մէջ գրել է հայոց թաղի, 4) այն խօսքերը, որ «Վտակը» տպել է՝ թէ իբր Սագանը իր լուրի մէջ գրած է եղել «չը գիտեմ ինչու Թուրքերը խստիւ վայրացել են», ճիշդ չէ, որովհետև նա «չը գիտեմ ինչու» բառերը երբեք չէ գրել:

Տպագրելով Սագանի նամակը, մենք համոզված ենք, որ հասարակութիւնը՝ կարդալով այդ նամակը՝ միանգամայն ճիշտ կը գտնէ մեր վարմունքը, թէ ինչու անյարմար համարեցինք տպել այդ հերքումը: Մենք ամենևին չենք մեղադրում պ. Սագանին իր վերջին քայլի համար. գաւառական մի խեղճ և կիսակիրթ Թղթակցից պահանջել հերոսութիւն՝ մենք իրաւունք չունենք, քանի որ նրա աչքի առաջն են Մուշեղ Տէր-Օհանեանի նման դէպքերը: Այդ պատճառով էլ մենք ամենայն ներողամտութեամբ կը վերաբերվենք Սագանի վարմունքին:

Հարցը այլ ևս պարզված համարելով, մենք փակում ենք, մանաւանդ որ դատարանը կը պարզէ, թէ որքան ճիշտ են «Վտակի» անամօթ զրպարտութիւնները:

21-ն ապրիլի 1908 Գանձակ

Այսու խնդրում եմ «Մշակ»ի մեծարգոյ համարներից մէկում տեղ տալ հետևեալ նամակիս, միաժամանակ խնդրում եմ խմբագրութիւնդ չզլանա տալու իրա կողմից անել այս մասին կարևոր բացատրութիւնը:

Սոյն ապրիլի 11-ին, գիշերը քաղաքումս կատարվում, մի քանի տներում խուզարկութիւններ, և մարդկանց ձերբակալումներ. սովորութեանս համաձայն այդ լուրն մի բաց նամակով հաղորդումեմ «Մշակ»-ին միաժամանակ նոյն նամակում յիշում եմ, Գանձակում տարածված և յամառ կերպով պտտվող հետևեալ ինքն ըստ ինքեան ահեղ լուրը:

«Վաղը տեղի կունենայ գաւառապետ Աւալիանու (վրացի) հանդիսաւոր թաղումը. հանգուցեալին կըթաղեն հայոց թաղում գտնվող ռուսաց եկեղեցու բակում բազմաթիւ պսակների թւում կլինեն նաև Գանձակի Թուրք ազգաբնակութեան ինչպէս նաև մի քանի գիւղական համայնքների կողմից»: Ապա մի քանի տողից յետոյ աւելացնումեմ. «Դեռ բոլորովին չը պարզված թէ սպանութիւնը ում գործ է և ինչ ազգի է պատկանում սպանողը՝ չ'գիտեմ ինչու *) Թուրքերը խստիւ վայրացել են որ հայերը սպանութեան վայրը Թրքաց մասն են ընտրել»:

«Մշակ»ում վերոյիշեալ լուրն մեզ անհասկանալի պատճառով, և 'ի ցաւ մեր և Գանձակի իրենց աչքի կերանը չ'տեսնող միւս Թերթի Թղթակիցների, ինչպէս նաև նրանց ներշնչած բծախնդիր ընթերցողների —այդ լուրն լոյս է տեսել աղաւաղումներով որը աւելորդ չեմ գտնում առաջ բերել (Յուսալով որ խմբագրութիւն կ'պարզէ այդ խոշոր Թիւրիմացութիւնը)

«Մշակ» 82-դ համար.

«12 ապրիլ: Տեղի ունեցաւ սպանված գաւառապետ Աւալիանու (վրացի) հանդիսաւոր Թաղումը հանգուցեալին Թաղեցին հայոց Թաղի Ռուսաց եկեղեցու բակում, բազմաթիւ պսակների Թւում կային Գանձակի Թուրք ազգաբնակութեան ինչպէս և մի քանի հայ գիւղական համայնքների կողմից:»

Ապա մի քանի տողից յետոյ յիշուած է. «Դեռ չէ պարզված (Ես գրել եմ չը պարզված) թէ սպանութիւնը ում գործն է և ինչ ազգի և պատկանում ոճրագործը. (միջակէտը իմս չէ) Թուրքերը խստիւ վայրացել են որ հայերը սպանութեան վայրը Թրքաց մասն են ընտրել»

Այստեղ եթէ մի աններելի աչք ծակող սխալմունք կա, այն է որ Աւալիանուն Թաղելն Թրքաց Թաղի ռուսաց եկեղեցու բակումը. երկրորդն այն որ «դեռ չը պարզված» խօսքերքի տեղ լոյս է տեսել «դեռ չէ պարզված) վերջինս կարելի է վերագրել տպագրական սխալի, իսկ առաջինը կարիք ունի բացատրութեան….

Երբ ապրում ենք Գանձակի նման վերին աստիճանի բծախնդիր հասարակութեան շրջանում երբ ամէն մէկը իր դերի մէջ մի գրաքննիչէ ներկայանում, պարզ բանէ լուրն այդպէս աղաւաղած լոյս տեսնելու պատճառաւ ամենից շատ վշտացողը պտի լինի լրատու Թղթակիցը. ես պատրաստվումէի մի հերքում գրելու, յանկարծ ինձ համար ոչ բոլորովին անսպասելի, խումբ խումբ և հատ հատ մարդիք են մօտս գալիս և յայտնում իրենց վշտակցութիւնը. խորհուրդ տալով եթէ «Սագանը» ես եմ հերքէ թէ չէ ժողովրդը շատ գրգռւածէ թէ իմ դէմ և թէ «Մշակ»ի դէմ:

Իսկ մի ցույցմոլ և փառամոլութեան ցաւով կուրացած և վարակված պարոն Մելքոնեան անունով (որը ինչպէս լսեցի յաւակնութիւնը ունի Թղթակցի պաշտօն ունենալու) դուրս գալով տարրական քաղաքավարութեան և վայելչականութեան սահմանից օր ցերեկով եկեղեցու բակում բազմաթիւ հասարակութեան ներկայութեամբ մօտենալով ինձ սկսեց փողոցային հայհոյանքներ թափել թէ լրատուիս գլխին ընտհանրապէս և թէ Քալանթարի հասցէին մասնաւորապէս: Եւ ոչ մի տրամադրութիւն չ'ցոյց տալով լսել իմ բացատրութիւնը, օգտվելով նաև իր շրջապատված դիւրահաւատ ներկա եղողներից:

Անմիջապէս յիշելով նոյն վայրում պատահած յիշեալ խուժանապետի եղբօր միայն ոգեղ վարմունք, որ անցեալ տարի իրեն Թոյլ տուաւ խուժանին հրամայելու «տուէք այս …. որդին»—իրենից քաղաքավարութեամբ և դիրքով բարձր մի համալսարանական պարոնի, ինձ Թւում էր լսել խոհեմ մարդկանց խորհրդին ու հեռանալ, այն վայրից որոնց զէնքը սպառնալիքն է իսկ վիճելու ձևը փողոցային հայհոյանքը: Չի կարելի չ'յիշատակել և այս որ այս Թէրուս խուժանապետին դադար չէ տալիս իրենից կրթութեամբ աւելի բարձր եղբօր վաստակած դափնիները և ուզում էր այնպիսի մի բան սարքի որ իր աւագ եղբօր հերոսութիւնը մոռացուի սակայն պարոնի շրջապատողների մէջ գտնվեցին աւելի լուրջ խոհեմ անձնաւորութիւններ որոնք մեզ յանդիմանութիւններով զսպեցին պարոնի կատաղութիւնը:

Աւետիք Սահակեան Սագան

Յ. Գ. Մասնաւոր

Յատուկ խնդրումեմ տեղ տաք այս նամակիս ամբողջովին, և ստորագրութիւնս լինի թէ իսկականը և թէ պսեվդոնիմս: Երևի խմբագրութիւնդ նրա համարէ լուրն այդ ձևը տուել որ տպել է այն ժամանակ երբ Աւալիանին Թաղուած է եղել 6 օրից յետոյ: Յուսամ որ տեղ կըտաք Չորեքշաբթի կամ հինգշաբթի օրոյ համարում:

Աւ. Սահ.

---

*) Առաջին նամակի մէջ չը կան «չը գիտեմ ինչու» բառերը: Խմբ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Համբարձման տօնի պատճառով, «Մշակի» հետևեալ համարը լոյս կը տեսնի շաբաթ, մայիսի 24-ին:

◆ Այսօր, Թիֆլիսի արտիստական ընկերութեան Թատրօնում, տօնվում է Լէօի յոբելեանը:

◆ Թիֆլիսի ժամ. գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ վնասակար ուղղութեան համար փակվեցին Թիֆլիսում հրատարակվող վրաց «Ցխովրէբա Սարկէ» (Կեանքի հայելին) լրագիրը և «Ալիօնի» (Արշալոյս) շաբաթաթերթը:

◆ Թիֆլիսի ոստիկանապետը կարգադրել է պրիստաւներին անձամբ շրջել բոլոր պետական, հասարակական և դասային հաստատութիւնները, նաև բանկերը, գրասենեակները, փոխադարձ վարկի ընկերութիւնները և այն հաստատութիւնները, ուր կատարվում են դրամական շրջանառութիւններ, և տեղում ստուգել՝ ինչպիսի զինուորական պաշտպանութիւն գոյութիւն ունի: Եթէ պաշտպանութիւն չը կայ կամ եղածը պակասաւոր է, հաստատութեան վարչութեան հետ համաձայնութեան գալով, անմիջապէս միջոցներ ձեռք առնել արժէքաւոր իրերը պաշտպանելու: Դրամներ ընդունելու և յանձնելու ժամերում ուժեղացնել հսկողութիւնը ոստիկանական պաշտօնեաներ նշանակելով: Կողոպտման յանցաւորին չը գտնելու ամբողջ պատասխանատուութիւնը ընկնում է պրիստաւների վրա:

◆ Բարձրագոյն կարգադրութեան համաձայն, այս տարի Երևանի նահանգի գաւառների մի քանի գիւղերից չեն առնվելու պետական «օբրօչնի» կոչված տուրքերը, պետական հողային հարկը, զեմստվային հողային տուրքը և զինուորական հարկը:

◆ Երկրագործութեան գլխաւոր կառավարչի Կովկասի լիազօրի դիւանատանը Անդրկովկասի զանազան տեղերից ստացված տեղեկութիւնների համաձայն, գարնանացանը և աշնանացանը ամենուրեք լաւ են:

◆ Ստացանք Տափի-Թաղի Քամոյենց ս. Գէորգ եկեղեցու հաշիւը 1907 թ. (Երէցփոխ Առաքել Վարդապետեանի օրօք): Հաշիւները ստուգված են վեր. յանձնաժողովի ձեռքով:

◆ Ղազախ-Գանձակի հողային մասնաժողովը ամառս մեկնում է Գանձակի, Արէշի և Ղազախի գաւառները իր աշխատանքները կատարելու համար:

◆ Վաղը ուրբաթ, մայիսի 23-ին, Ա. Քալանթար և Ս. Տիմօֆէեվ կը կարդան զեկուցումներ կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան մէջ: Առաջինը կը կարդայ կլիմայացման մասին, իսկ երկրորդը գաւառական ընկերութիւնների մասին: Սկիզբն է 8 ժամին:

◆ «Ռուսիայի հանրապետութեան» յայտնի գործի առիթով Մետեխի բանտում բանտարկվածները հեռագրով դիմել են Պետական Դումայի նախագահին և պատգամաւորներ Մակլակովին և Չխեիձէին, խնդրելով միջնորդել՝ որ իրանց գործը Օդեսայի դատաստանական պալատից կրկին յանձնվի Թիֆլիսի դատաստանական պալատին, որպէսզի վկաները հնարաւորութիւն ունենան ներկայ գտնվել քննութեանը:

◆ «Закавказье» լրագիրը մայիսի 20-ից լոյս է տեսնում խմբագիր իշխ. Կ. Թումանովի ստորագրութեամբ: Լրագրի հրատարակութիւնը Պ. Գոտուայից անցել է նոր կազմակերպված ընկերութեան:

◆ Բնութիւնը սիրող ընկերութեան անդամները էքսկուրսիայով գնում են սևծովեան գաւառները գիւղատնտես Տիմօֆէեվի առաջնորդութեամբ:

◆ Համաձայն նահանգական առեանի ցուցմունքների, Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը փոխել է արհեստանոցների ծառայողների նօրմալ հանգստեան պարտադիր կանոնների նախագիծը: Նոր նախագիծը կը յանձնվի դումայի քննութեան յունիս ամսում:

◆ Թիֆլիս է եկել բարձրագոյն կարգադրութեամբ պալատական բժիշկ Բերդենսօնը Տէրէկի և Կուբանի շրջաններում երևցած բծաւոր տիֆի պատճառները քննելու և համաճարակի առաջն առնելու միջոցներ մշակելու համար: Բերդենսօնը մայիսի 19-ին ներկայացաւ Կովկասի Փոխարքային:

◆ Թիֆլիսի մանկաբարձուհիների ընկերութեան նախագահուհուն Թոյլատրված է իւրաքանչիւր ամսվայ 5-ին Օլգինսկի ծննդ. ապաստարանում զրոյցներ կազմակերպել մանկաբարձութեան հարցերի վերաբերեալ:

◆ Թիֆլիսի վրաց ազնուականութեան հողային բանկի վերատեսուչ Չելոկայեվը պաշտօնից հրաժարվել է: Մայիսի 26-ին կայանալու է ընդհանուր ժողով 1907 թ. հաշիւները, 1908 թ. նախահաշիւը քննելու և բանկի երկու նոր վերատեսուչներ և 2 գնահատողներ ընտրելու համար:

◆ Թիֆլիսաբնակ մի խումբ նուխեցիներ բաց են արել իրանց համաքաղաքացիների մէջ ստորագրութիւն պահելու իրանց ծխական ուսումնարաններում երկու Թոշակաւոր Լէօի անունով: Յոբելեանին մասնակցելու համար ընտրված է Սիմէօն Շխեանը:

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութեան հաշւեցուցակից երևում է, որ քաղաքը 1908 թ. յունվարի 1-ից առ 17-ն մայիսի մուտք ունեցել է տրակտիրային տուրքից 45,965 ր. 40 կ., ձիերից և կառքերից—25,655 ր. 80 կ., քաղաքային հողերի կապալներից 19,164 ր. 42 կ., զանազան օբրօչնիյ տուրքերից 16,293 ր. 46 կ., քաղաքային ջրանցքից 56,596 ր. 37 կ., քաղ. սպանդանոցից 13,816 ր. 13 կ., գնահատման տուրքից 20,285 ր. 65 կ., ընդամենը 201,879 ր. 91 կ.: Անցեալ տարի նոյն ժամանակաշրջանում ստացվեց 210,987 ր. 64 կոպէկ:

◆ Երէկ, երեկոյեան ժամը 6-ին, Իզմայլօվսկայա փողոցում, ատրճանակի հարուածով վիրաւորվեց Աբասթումանում գտնվող մեծ-իշխանական պալատի կառավարիչ Խելայեվը: Չարագործը չէ ձերբակալված:

◆ Թիֆլիսի քաղաքային դումայի նիստի շարունակութիւնը նշանակված է վաղը, մայիսի 23-ին:

◆ Վերջնական ձևով արդէն կազմված վերջացրած է մի զեկուցագիր քաղաքային նոր սպանդանոցի մասին: Այս զեկուցագիրը տեխնիքական խորհրդի եզրակացութեան հետ միասին կը յանձնվի քաղաքային դումայի քննութեան յունիսի 9-ին:

◆ Թիֆլիսի քաղ. գլխաւոր ինժեները աւարտել է Թիֆլիսում գազային գործարան և էլեքտրական լուսաւորութիւն հաստատելու նախագիծը, որ կը յանձնվի դումային մօտակայ նիստերից մէկում:

◆ Լուրերին նայած՝ Բաթումում մօտ օրերս լոյս է տեսնելու «Черноморскій Вѣстникъ» Թերթը:

◆ Յունիսի 1-ին Մուշտայիդ այգում, յօգուտ դպրոցից դուրս կրթութիւն տարածող ընկերութեան, կը կայանայ զբօսանք:

◆ «Մշակի» երէկվայ համարում Կ. հ. բ. ընդ. ժող. հաշւի մէջ մի սխալ կայ. պ. Մելքումեանի համար փակագծում յիշված է խորհրդի անդամ. պ. Մելքումեան խորհրդի անդամ էր անցեալ տարի. այս տարի նա հրաժարվեց:

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Մայիսի 20 ին, երեկոյեան ժամը 6-ին, Ալ. Ճարբաշևի մօտ ծառայող 45 տարեկան Աւագ Մարգարովը յայտնել է ոստիկանութեան, որ նա ստանալով Ճարբաշևի խանութի բաժանմունքից մի օրվայ մուտքը 80 րուբլի՝ վերադառնալիս է եղել գլխաւոր խանութը, որը գտնվում է Միջի փողոցում, Օկօյեվսկի փողոցում նրա վրա յարձակվել են 2 անյայտ չարագործներ, ատրճանակներով զինված, և մահվան սպառնալիքով փող են պահանջել, բայց երբ Մարգարովը պատասխանել է, որ փող չունի, չարագործներից մէկը դանակով խփել է գլխին, Թեթև վէրք հասցնելով, իսկ միւսը փախչող Մարգարովի ետևից 4 անգամ կրակել է, բայց անհետևանք: Չարագործները անյայտացել են, ոչինչ չը վերցնելով:

◆ Մայիսի 19-ին ոստիկանութիւնը, ի նկատի առնելով Թիֆլիսի բաղանիքների բանւորների պրոֆեսիոնալ ընկերութեան վնասակար գործունէութիւնը, ձերբակալել է այդ ընկերութեան հետևեալ անդամներին՝ Մաշադի Ղուլալ Ֆաթալ-օղլուն, Խեչօ Համբարձումեանին, Մանուկ Ալամեանցին, Հասան Մամեդ-օղլուն, Թեդո Իաշվիլուն և Մկրտիչ Խալուբչեանցին և բանտարկել է Մետեխի բանտում: Յարքունիս են գրաւված ընկերութեան գործերը և գրութիւնները:

ԲԱԳՈՒԻ ԼՈՒՐԵՐ

◆ Նաւթարդիւնաբերողների խորհրդի գլխաւոր ինժեների պաշտօնի համար մեծ քանակութեամբ խնդիրներ են ստացվում ծառայութեան մտնել ցանկացողներից: Ներկայումս ստացված խնդիրների Թիւը հասնում է 200-ի:

◆ Քաղաքային վարչութեան դպրոցական բաժանմունքը տեղեկացնում է ի գիտութիւն հասարակութեան, որ քաղաքային տարրական դպրոցներում աշակերտների ընդունելութեան համար խնդիրները ընդունվելու են յունիսի 1-ից քաղաքային շինութեան մէջ, բացի Միքայէլեան, 2-րդ քաղաքային, օրիորդաց երկդասեան ու 6-րդ սև-քաղաքային, հայկական գաղութի 13-րդ և բոլոր ռուս-Թուրքական դպրոցներից, ուր աշակերտների ընդունելութիւնը կը կատարեն դպրոցի կառավարիչները: Խնդիրը, ծննդականի ու ծաղկի վկայականների հետ միասին, պէտք է ներկայացնել քաղաքային դպրոցական բաժնին առ. ժամը 9—12-ը:

◆ Կովկասեան Փոխարքան Թոյլատրել է Բագուի քաղաքային երկդասեան դպրոցը վերածելու վեց դասարանի 1872 Թւի կանոնադրութեան հիման վրա, դրանից առաջացող ծախքերը դնելով քաղաքային ինքնավարութեան վրա:

◆ Մայիսի 17-ին, երեկոյեան ժամը 9-ին, Բօնդարնայա փողոցում գտնվող «Поневолѣ» կոչվող բաղնիքն են մտնում երկու անյայտ չարագործներ և պահանջում համար: Այն միջոցին, երբ ծառաները զբաղված են լինում կարգի բերելով համարը, չարագործները մտնում են դրամարկղին և, ատրճանակը ուղղելով գանձապահուհի Աննա Լօմակօվային, խլում են ունեցած 60 ր. և անյայտանում: («Б.»)

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ Ներքին գործերի մինիստրութեան մէջ հարց է յարուցված և քննութեան է ենթարկվում այն՝ թէ Ֆինլանդիայի հետ ունեցած սահմանը արդեօք ունի՞ միենոյն քաղաքական նշանակութիւնը, ինչ որ միւս օտար պետութիւններինը, և այդ տեսակէտից կարելի՞ է իրաւունք տալ ֆինլանդական սահմանագլխի վրա գտնվող սահմանապահներին և զօրամասերին անցնելու ֆինլանդական սահմանագլուխը նրա սահմանների մէջ պատսպարան որոնող չարագործներին հետամուտ լինելու համար: («Русь»)

◆ «Новость» լրագիրը հրատարակող Պետերբուրգի «Գուտտենբերգ» ակցիոներական ընկերութեան տպարանը արդէն սնանկ է յայտարարված: Պարտքի քանակութիւնը հասնում է 1 և կէս միլիոնի: Ընկերութեան գոյքը վաճառելուց յետոյ՝ երկու տպարանից՝ ստացվել է 36 հազար րուբլի: Պարտատէրերը ստիպված են եղել բաւականանալ րուբլուն մի կոպէկ ստանալով: («Б.В.»)

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

Նիստ մայիսի 20-ի

Նիստը բանում է իշխ. Վոլկօնսկին առ. ժամը 11 և 21 րոպէին: Մինիստրների օթեակումն է ֆինանսների մինիստրը: Կարդացվում է օրակարգը:

Մի քանի հարցեր ընդունվելուց յետոյ, զեկուցանվում է ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութեան արտակարգ ծախքերի նախահաշիւը, որ կազմել է բիւջէտային մասնաժողովը:

Զեկուցանող Մարկով I ը մատնանշում է, որ նախահաշիւը քննելու ժամանակ միջվարչական և բիւջէտային մասնաժողովների միջև համաձայնութիւն կայացաւ և ճանապ. մինիստրութեան արտակարգ ծախքերը որոշվեց 74,082,021 րուբլի:

Նախահաշիւը ընդունվում է առանց վիճաբանութիւնների:

Նոյնպէս առանց վիճաբանութիւնների ընդունվում է մինիստրների խորհրդի դիւանատան նախահաշիւը, որով ծախքերը որոշված են 149,426 րուբլի:

Յայտարարվում է ընդմիջում:

Նիստը վերսկսվում է ժամը 2 և 7 րոպէին: Այս անգամ նախագահում է Խոմեակովը:

Հերթում դրված է այն զեկուցագիրը, որով առաջարկվում է գումար յատկացնել քաղաքային և գիւղական հոգևորականութեան ռոճիկը աւելացնելու համար:

Զեկուցանող Կովալևսկին մատնանշում է, որ խնդրվող դրամները կը գործադրվեն ոչ թէ առանձին հոգևոր անձերի ռոճիկները աւելացնելու վրա, այլ կաւելացվեն այն 12 միլիոն րուբլու վրա, որ ամեն տարի արդէն յատկացվում է ռուսաց սինոդի նախահաշւում: Ռուսաց ուղղափառ եկեղեցին իր մէջ պարունակում է մօտաւորապէս 50,000 քահանաներ ու սարկաւագներ և 40,000 եկեղեցական այլ սպասաւորներ. այս ամբողջ կազմը և նրանց ընտանիքները միանգամայն ապահովված չեն ոչ ռոճիկով, ոչ կենսաթոշակով: Իսկ հողերից ստացվող եկամուտները և զանազան ծիսակատարութիւնների համար տրվող վճարները ինքնին եկամուտի նօրմալ և կանոնաւոր աղբիւրներ չեն կարող համարվել: Դեռ Նիկոլայ Պավլովիչի Թագաւորութեան ժամանակ առաջին փորձը եղաւ օգնութեան հասնել հոգևորականութեանն արքունական միջոցներով: Այն օրից էլ այդ հարցը զբաղեցնում է կառավարութեան և հասարակութեան: Այժմ դրանով պէտք է զբաղվի Դուման:

Բիւջէտային մասնաժողովը համաձայնում է այն առաջարկութեան հետ, որ անհրաժեշտ է աւելացնել քաղաքային և գիւղական հոգևորականութեան ռոճիկը 400,000 րուբլով տարեկան, սակայն այն պայմանով, որ այդ գումարի մի մասը գործադրվի Սիբիրի գաղութային հոգևորականութեան ռոճիկի վրա, որ ուղղափառ հոգևորականութեան ռոճիկն աւելացնելու ժամանակ գումարները նշանակվեն եկամուտների համաձայն, հոգևորականութեան Թեմական համագումարների եզրակացութիւնների հիման վրա, և որ մետրիքական գրքերից քաղուածքներ տալը հոգևորականութիւնը տայ ձրիաբար:

Խօսելու են 60 հռետորներ: Քուէարկութեամբ ընդունվում է՝ այլևս ոչ ոքի ձայն չը տալ: («Հ. Գ.»)

(Կը շարունակվի)

ՄԱՄՈՒԼ

Աջակողմեան մամուլը մինչև այսօր էլ շարունակում է իր կատաղի արշաւանքը Փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրոնցօվ-Դաշկովի դէմ մեղադրելով նրան Թուլութեան մէջ տեղական ազգաբնակութեան նկատմամբ:

Խօսելով այդ յարձակումների մասին՝ «Баку» լրագիրը իր առաջնորդող յօդուածում (№ 69) ասում է.

Ստիպված ենք հարիւրերորդ անգամ կրկնել հին երգը՝ թէ իշխանութեան «ամրութիւնը» ձեռք է բերվում ոչ թէ վախեցնելով ազգաբնակութիւնը և բռնութիւններով, այլ ազգաբնակութեան մէջ վստահութիւն ներշնչելով դէպի իշխանութիւնը:

Հարիւր տարի առաջ կովկասեան ազգաբնակութիւնը, ի հարկէ, աւելի լաւ էր վերաբերվում դէպի Ռուսաստանը, քան թէ Գոլիցինի ժամանակները:

Լրագիրը այդ բացատրում է նրանով,

որ ռուս բիւրօկրատիան վերջին քսան և հինգ տարիները փոխեց իր կառավարութեան կուրսը և բացարձակ թշնամական վերաբերմունք բռնեց դէպի ազգաբնակութեան կուլտուրական-պատմական աւանդութիւնները, փոխանակ նրան մասնակից դարձնելու քաղաքակրթական բարիքներին:

Այս, համեմատութեան դնելով Անգլիայի և Ռուսաստանի վերաբերմունքը դէպի իրանց հպատակ այլազգիները, նկատում է.

Անգլիան ամենուրեք մտցնում է ինքնավարութիւն, ազգաբնակութեանը ներշնչում է այն միտքը՝ թէ անգլիական տիրապետութիւնը բարիք է հանդիսանում իւրաքանչիւրի համար, ով բաղդաւորութիւն ունի անգլիական հպատակ լինելու։

Մինչդեռ մեզանում ամեն մի վարչական անձ իր կարիէրան հիմնում էր տեղացիների հալածանքի վրա, դպրոցների և կրթական հաստատութիւնների փակման վրա։ Հարիւր տարվայ ռուսաց տիրապետութեան ամբողջ ժամանակամիջոցում ոչ մի լուրջ քաղաքական կամ տնտեսական բարեփոխութիւն չէ մտցված. ոչ մի վերջօկ արքունական հող չէ յատկացված անհող գիւղացիներին, հազարաւոր վիրստ ամայի դաշտեր մնում են առանց ոռոգման։ Ազգաբնակութեան սովատանջութիւնը այստեղ նս դառնում է օրվայ չարիք։

Փոխանակ զարգացնելու քաղաքացիութիւնը, զարթեցնելու ազգաբնակութեան ինքնագործունէութիւնը, նրա կուլտուրական սովորութիւնների աճումը, պատւաստվում էին վայրենի բնազդներ, աւազակութիւններ, կողոպուտներ...

Պատճառը,—ասում է լրագիրը,—պէտք է որոնել

այն պետական իմաստից զուրկ անվստահութեան և ճնշումի քաղաքականութեան մէջ, որը մի ամբողջ քառորդ դար անբարոյականացնում էր ազգաբնակութիւնը և սանձարձակ դարձնում նրա ստոր կրքերը... Եւ, ընդհակառակը, իբ սաղմի մէջ ոչնչացնում էր ամեն մի կազմակերպված կուլտուրական կեանք, ճզմում՝ հաստատելու իրաւական սկզբունքներ և հասարակական ինքնագործունէութիւն։ Քաղաքական սխալները երբեք և ոչ մի տեղ ի զուր չեն անցնում. և ժամանակակից անկարգութիւնները, անարխիան, տնտեսական քայքայումը և բարոյական վայրենացումը հանդիսանում են իբրև ուղղակի հետևանք և անմիջական ժառանգութիւն նախորդ էպօխայի...

Միանգամայն ճիշտ լուսաբանութիւն, եթէ միայն հասկանալու տրամադրութիւն ունենան ռէակցիոներները։

*

Մայրաքաղաքի թերթերը մի քանի ժամանակ առաջ հաղորդեցին, որ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը մի շրջաբերականով առաջարկել է ազատել փոխադրական քննութիւններից դպրոցների այն աշակերտներին, որոնց ընտանիքները վնասվել են գետերի հեղեղներից։ Այդ առիթով «Р. В.» լրագիրը հետևեալ իրաւացի դիտողութիւններն է անում.

Երկնոր, ջրհեղեղը և քննութիւնները հէնց իրա մինիստրի աչքում, ակներև է, որ նոյնանման դժբաղդութիւններ են, և նրանց, որոնց հասնում է Աստուծոյ պատուհասը, նա արդարացի է համարում ազատել իր մինիստրական քննական պատուհասից. բայց ինչպէս առաջ հանդիսաւոր կերպով յայտարարվում էր, որ փոխադրական քննութիւնները վերականգնել թելադրում է միայն դէպի աշակերտների բարիքն ու առաջադիմութիւնը ունեցած խոհեմ հոգատարութիւնը։ Բայց միթէ ազատում են բարիքից։ Բարիքը խլում են։ Եւ միթէ մինիստրութիւնը ձեռք կը բարձրացնէր զրկելու այն ընտանիքների զաւակներին, որոնք վնասվել են հեղեղումներից, եթէ միայն նա քննութիւնները արդարև բարիք համարելու լինէր։

Փոխադրական քննութիւնների վերասահմանումը համարելով որ ոչ մի առնչութիւն չունի մանկավարժութեան հետ, լրագիրը «ռուսաց լուսաւորութեան» գործի նոր ղեկավարների ձեռք առած այդ միջոցը բացատրում է որպէս վրէժխնդրութիւն դպրոցի դէմ այն բանի համար, որ

ազատագրական շարժման ժամանակ նրա սաները գլխահան եղան և անկարող եղան աւելի զսպված ու խոհեմ վարվել քան իրանց ծնողները։ Իսկ այն ժամանակ, երբ մեզանում մինիստրութիւնը հաշիւներ է տեսնում իր խնամքին յանձնված երեխաների հետ, Գերմանիայում, որը վաղուց արդէն վերացրել է փոխադրական քննութիւնները, այժմ լուրջ հարց է յարուցվում բոլորովին վերացնելու նաև աւարտման, այսինքն հասունութեան քննութիւնները։

Այս սիստեմը, որ մեզանում շարունակում են գործադրել, Գերմանիայում վերացվել է 30 տարի առաջ։ Եթէ ընդունակ լինէինք տեսնելու թէ ինչպէս են տանում այժմ դպրոցական գործը այնտեղ, կամ եւրօպական միւս առաջաւոր երկրներում, թերևս այսքան յետ չէինք մնայ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

Ներքին

20 մայիսի

ՕԴԵՍՍԱ։ Քաղաքային դուման որոշեց ամեն տարի 5000 րուբլի նպաստ յատկացնել ռուս ժողովրդի միութեան բացած արական գիմնազիայի համար։

ՎԱՐՇԱՎԱ։ Սլաւօն գործիչները մեկնեցին արտասահման.

ԿՐԵՄԵՆՉՈՒԳ։ Գիշերով 37 վերստի վրա գաղտնաբար սրի են քաշել 5 հոգուց բաղկացած մի ընտանիք։

ՏՕԲՕԼՍԿ։ Տիւկալինսկի, Տարսկի, Կուրգանսկի և Տօբօլսկի գաւառներում գետերը ծածկել են շատ ցանքսեր։ Ջուրը աւելանում է։

ՎԱՐՇԱՎԱ։ Համալսարանի ռեկտոր վերստին ընտրվեց պրոֆէսոր Կարսկին։

ՄՕՍԿՎԱ։ Փակվեց աւտոմօբիլների միջազգային ցուցահանդէսը։

Արտաքին

20 մայիսի

ԲԵՐԼԻՆ։ Սպիտակ դահլիճում երէկ ցերեկով, ի պատիւ շվէդական թագաւորական զոյգի, կայացաւ հացկերոյթ, որին ներկայ էր նաև պետական կանցլերը։ Երեկոյեան օպերային թատրոնում տրվեց պաշտօնական ներկայացում։

«Նորդ-Դէօյտշէ» լրագիրը պաշտօնապէս հաղորդում է, որ Կրուպպի ֆիրման երբեք ոչ մինչև, ոչ էլ 1871 թւից յետոյ չէ վայելել որևէ ֆինանսական աջակցութիւն ֆիդէյկօմիսի կամ թագաւորի կողմից։

ՎԻԵՆՆԱ։ Պատգամաւորների պալատը 125 ձայնով ընդդէմ 74-ի որոշեց անցնել բիւջէի յօդուածային քննութեան։

ԲԵԼԳՐԱԴ։ Սերբ մամուլը սկուպշչինայի ընտրութիւնների հետևանքը մեկնում է իբրև Պաշիչի քաղաքականութեան պարտութիւն։ Կառավարական շրջաններում կարծում էին թէ կառավարական կուսակցութեան համախոհներից կընտրվեն առնուազն 100 հոգի, այն ինչ ընտրվեցին 81 հոգի, որոնց թւում է նախկին դաւադիր գնդապետ Միշիչը։

ԿԵՄԵՐՆ։ Բժշկական սէզօնը բացվեց։

ՏՕԿԻՕ։ Բարօն Գօդօյին ցոյց տուած ընդունելութեան լուրը ճապօնական մամուլը գոհացուցիչ է համարում։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—$9\frac{1}{2}$—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՈՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Կ. Ի. ԳՋԵԼԻԵՎ—1—2 ժ. ականջի, քթի և կոկորդի։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—$1\frac{1}{2}$ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—$1\frac{1}{2}$—2 ժ. մանկաբարձութեան։
Գ. Ե. ԳՈՒՐԳԵՆՈՎ—12—$12\frac{1}{2}$ ժ. կանանց և մանկաբարձութեան։

ԻՐԻԿՈՒՆՆԵՐԸ

Ա. Ե. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

Հաւլաբարի
ՇԱՄՔՕՌԵՑՈՑ (Կարմիր Աւետարան) եկեղեցու ծխական հոգաբարձութիւնը յայտնում է, որ ամսիս 18-ին նշանակված ընդհանուր ժողովը յետաձգվեց և նոյնը կայանալու է ամսիս 25-ին, կիրակի, առաւօտեան ժամը 10-ին։ Հոգաբարձութեան պայմանները կարելի է կարդալ դպրոցի դահլիճում ամեն օր 3—6 ժ. կէսօրից յետոյ։
1—1

Լոյս տեսաւ և ուղարկվեց բոլոր բաժանորդներին «Յուշարարի» № 4-րդ Լէօին նուիրված յօբելեանական համարը՝ հետևեալ բովանդակութեամբ.

Դեռ հեռու ենք (ինքնաձեռագիր գրութիւն Լէօի).—Լուռ քնարիս. (բանաստ.)—Քաջի շիրիմը (բանաստ.)—Ի պատիւ յօբելեարի.— Ոգի-Արքան (բանաստ.)— Երկու խօսք.—Նուէր յօբելեարին.—Յօբելեարը.—Լէօ.—Լէօին.—Կոչ.—Ինչու.—Մի աստղ տեսայ.—Լևոն Ե. Լուսինեան.—Նմուշներ հայ գեղարուեստի.— Նիւթեր հայ թատրոնի պատմութեան համար.—«Յուշարարի» թղթակիցներից.— Պատկերներ.—Լէօ. (վերջին լուսանկարից).—Դպիր Գալ. Տէր-Մկրտչեան և Լէօ.—Լէօ՝ տելեգրաֆիստ.—Լէօ՝ «Մշակի» աշխատակից.—Սովեալներ.—Լևոն Ե. Լուսինեան.—Խաչքար XIII դարու.— Ե. ժին Տէր-Գրիգորեան։

Նոր բաժանորդները կը ստանան բոլոր լոյս տեսած համարները և յաւելուածները։ Տարեկան բաժնեգինն է 5ր., արտասահման 6 ր.։ Հասցէն՝ Тифлисъ, редакція „Ушараръ“ Rédaction «Houcharar», Tiflis.

ՀՐԱՒԷՐ
Տափի-Թաղի (Քամոյեան) ս. Գէորգ եկեղեցու հոգաբարձութիւնը պատիւ ունի հրաւիրելու մեծարգոյ ծխականներին տարեկան ընդհանուր ժողովի, որը նշանակված է մայիսի 25-ին, կիրակի. առաւօտեան ժամը 11-ին ս. Նշանի դպրոցում։
Ընդհանուր ժողովի զբաղմունքներն են՝
1. Եկեղեցու 1907 թ. գործունէութեան հաշւետուութիւնը, վերաստուգիչ յանձնաժողովի զեկուցման հետ միասին։
2. 1907 թ. հաշւի և ներկայ 1908 թ. նախահաշւի քննութիւն և հաստատութիւն։
3. Պաշտօնեաների գործավարութեան առիթով տեղի ունեցած թիւրիմացութիւնները պարզելու։
Ծանօթութիւն.—Հրաւէրը և հաշիւը նախահաշւի հետ միասին յանձնված է պօստին այն ծխականների համար, որոնք անձամբ չեն ստացել։
(հ. շ. կ.) 3—1

Առաջիկա դպրոցական տարվայ ընթացքում իմ դասագրքերս պիտի վաճառվեն հետևեալ պայմաններով.
1) ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ ա. տ., նոր տիպ. բազմաթիւ նոր պատկերներ. գրութեան նոր օրինակներ տպագրին զուգընթաց. ու, իւ, յ տառերի համար նոր ձև տառեր, որոնք փարատում են բոլոր դժուարութիւնները. գինը 20 կոպէկ. գումարով 13 կոպէկ։
2) ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ երկրորդ տարի, նոր տիպ. գինը քառասուն կոպէկից իջեցրած է 30 կոպ., գումարով 20 կոպ.։
3) ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ երրորդ տարի, նոր տիպ. բովանդակութիւնը ճոխացրած. հայկական մասը բոլորովին վերամշակված (նիւթեր հայի առտնին կեանքից, սովորութիւններից, աւանդութիւններից, գիւղացիական կեանքից և այլն). գինը 50 կ., գումարով 35 կոպ.։
4) ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ չորրորդ տարի, ազգային բաժնով (նիւթեր հայի անցեալից ու ներկայից. մեր նախահայրերը—Հայաստանը, նրա նահապետները, առաջին լուսաւորիչները, տառերի գիւտը, լեզուն, հինգերորդ դարի հայերը, հայ կանայք, հին տունը, հին ուսումնարանը, նիւթեր նորագոյն ժամանակներից). գինը 55 կ., գումարով 38 կոպ.։
5) ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ քերականութեան տարերք բազմաթիւ վարժութիւններով. գինն է 50 կ., գումարով 35 կ.։
6) Հեչյէի՝ թուաբանական խնդիրների ժողովածու, առաջին և երկրորդ տարվայ համար. գ. 35 կ., գումարով 20 կ.։
7) Նոյնը՝ երրորդ տարի. գ. 50 կ., գումարով 25 կոպէկ։
Դիմել հեղինակին՝ Тифлисъ, Николаевскій мост, фотографія Теръ-Гевондяна; օտարաքաղաքցիք՝ Тифлисъ, Центральная Книжная Торговля։ Միևնոյն պայմաններով վաճառվում են Թիֆլիսի միւս գրավաճառների մօտ։
Նիկողայոս Տէր-Ղևոնդեան
(հ.) 4—3

Ալէքս. ուսուցչ. ինստիտուտի
Ս Ա Ն
լաւ պրակտիկայով ուսանող ՑԱՆԿԱՆՈՒՄ է դասեր ունենալ ամարանոցում. 6 դ. քաղաքամաս, Խարփուխի հ/ւ., Воронцовская ул., № 47. Հարցնել Ա. Պօկուլին, ցերեկ. ժամը 8 1.
(օ. մ.) 3—3

Ռեալական դպրոց
Կառավարչական իրաւունքներով
Վերատեսուչ հիմնադիր
Յ. Զ. ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆ
1-ին և 2-րդ դաս. ընդունել. քննութիւնները միջակ. դպր. ծրագրով մայիսի 30 և 31-ին

Հաշւապահութ. ամառ. կուրսեր
Կօօպերատիվ ընկ. հաւանութեամբ
աւարտել է Ս.-Պ. բ. կոմմ. բարձր կուրսերը
Զբաղմունքների սկիզբը մայիսի 15-ից
Կուրսերի վճարը 60 ռուբլի

Թիֆլիս, Աւճալեան փողոցի սկզբին՝ 1-ая Тумановская ул. с. д. № 13.
(կ. հ. կ.) 5—5

„Գուտտենբերգ“
Գրավաճառանոցում վաճառվում են ԼԷՕԻ հետևեալ աշխատութիւնները.
«Հայկական տպագրութիւն», առաջին հատոր, երկրորդ տպագրութիւն, 1904, 1 ր. 20 կոպ.։
«Յովսէփ կաթողիկոս Արղութեան», 1902, 60 կոպէկ։
«Գրիգոր Արծրունի», առաջին հ. 1902
«Գրիգոր Արծրունի», երկրորդ հ. 1903
«Գրիգոր Արծրունի», երրորդ հ. 1905 — 4 ր.
«Ս. Մեսրոպ», 1904, 75 կ.։
«Ռուսահայ գրականութիւն», Վենետիկ, 1904, 1 ր. 50 կ.։
«Մելիքի Աղջիկը», վէպ, երկրորդ տպագրութիւն, 1905, 1 ր. 50 կ.։
Դիմել՝ Тифлисъ, книжный магазинъ Гуттенбергъ Г. И. Галустяну։
5—3

ԱԼՄԵՋԱ



Կովկասի և Անդրկասպեան երկրի միակ ներկայացուցիչը Ի. Ա. Ախօբաձէն է։
Գլխաւոր պահեստ և գրասենեակ
«Ալմեջա»-ի
Тифлисъ, Пушкинская ул. № 15.

ԱՏԱՄԻ ՑԱՒԸ
ՇՈՒՏ հանգստացնելու
եւ ատամն ու լնդերը ամրացնելու
ԼԱՒԱԳՈՅՆ ՄԻՋՈՑՆ Է
ԱԼՄԵՋԱ
ՇԱՏ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ
ցուցահանդէսներում նուէրների է արժանացել
ԱՂՔԱՏՆԵՐԻՆ ՁՐԻ
ԲԺՇԿՈՒԹԻՒՆ
Այցելուներին խնդրում ենք դիմել Ախօբաձէի գրասենեակը,
Пушкинская, 15.
Օտարաքաղաքցիներից կանխավճար ստանալով ուղարկում ենք վերադիր վճարով։
Դեղատներին զեղչ

Փոքրիկ սրուակը 40 կ. Իսկական սրուակը 1 ր. 20 կ.
Գրաս. և պահեստի բաժանմ. Баку, Старо-Полицейская, № 14. Հեռագիրների հասցէ. Тифлисъ, Ахобадзе.
(հ. շ.) 15—3

ՆՈՐ ԳԻՒՏ
„ԲՕՐՆՕ ՆԱՖԹԱԼԱՆ“



Բոլորովին փչացնում է գլխի թեփը, պլրքացնում մազերը, նպաստում է նրա բուսնելուն և տալիս է նրան իսկական տեսք։
Թոյլատրված է բժշկական վարչութիւնից, որպէս չը պարունակող ոչ մի վնասակար նիւթ։
Վաճառվում է՝ Кавказское Т-во торгов. аптек. товарами; Офицерское Экономическое общество и въ ихъ отдѣленеіяхъ. դեղատներում, դեղավաճառների և հոտաւէտեղէն ծախողների մօտ։
(7,22) 25—22

ԲԱՐՁՐ ՏԵՍԱԿԻ
ԿՕՇԿԵՂԷՆ

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԵԽԱՆԻԿ. ԱՐԴԻՒՆԱԲ. ԸՆԿ.
Ամեն տեսակ մօդային ձևերի. գտնվում է բոլոր յայտնի մագազիններում։
ФАБРИЧНОЕ КЛЕЙМО
С.ПЕТЕРБУРГЪ
Իսկականը այս կնիքն ունի իր վրա
ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ
ՄՕՍԿՎԱՅՈՒՄ
ՌԻԳԱՅՈՒՄ
ԿԻԵՎՈՒՄ
ԽԱՐԿՕՎՈՒՄ
ՕԴԵՍՍԱՅՈՒՄ
ՌՕՍՏՕՎՈՒՄ Դ/Վ
ԿԱԶԱՆՈՒՄ
ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳՈՒՄ
ԻՐԿՈՒՏՍԿՈՒՄ
ԹԻՖԼԻՍՈՒՄ
ՏԱՇԿԵՆՏՈՒՄ
ԳՈՒՄԱՐՈՎ ՎԱՃԱՌՔԸ
կատարում է
„ԼԷՕՊՕԼԴ ՆԷՑՇԵԼԷՐ“
ՇՈՒԵՅՑԱՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ
Նիժէգօրօդեան տօնավաճառում
Իրբիտեան տօնավաճառում
ԹԻՖԼԻՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ ԳՏՆՎՈՒՄ Է ԵՐԵՒԱՆԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱ
ԱՅՍՏԵՂ ԿԱՅ ՊԱՀԵՍՏ ԿԱՇՈՒԵՂԷՆԻ Ռուսական և արտասահմանեան արդիւնաբերութեան
ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐԻ Ռուս-ամերիկական ռետին. մանուֆակտուրային ընկերութեան
Կրեմ եւ Ապրետուրա կօշկեղէնի համար
Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԵԽ. ԱՐԴԻՒՆԱԲ. ԸՆԿԵՐ.
(Ե. Կ.) 100—29

Типографія „Экономія“ Авака Мугдусіанкпова съ С-ми. Большая Ванкская ул. № 3.